# ՀԱՆԳԻՍՏ Տ. ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆԻ



Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը խոր վշտով տեղեկացնում է Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Տ. Վաչե ծ. վրդ. Իգնատիոսյանի մահվան մասին:

Հայր Վաչեն վախճանվել է հունվարի 6-ին, Մարսելում, ուր երկար տարիներ, իբրև հոգևոր հովիվ, սպասավորել է Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս և Ս. Սահակ - Ս. Մաշտոց եկեղեցիներում:

Հոգեշնորհ Հայր Սուրբի անժամանակ մահվան կապակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գրեր է հղել Ամենապատիվ Պատրիարքին և Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նազգաշյանին՝ աղոթելով հանգուցյալի հոգու հանգստության համար:

*
* *

Տ. Վաչե ծ. վրդ. Իգնատիոսյանը (ավազանի անունով՝ Հարություն) ծնվել է 1939 թ. Բեյրութում:

Հոգևոր կրթությունը ստացել է նախ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դպրեվանքում, ապա՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ընծայարանում: 1961 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1966-1969 թթ. աստվածաբանության և հայրաբանության մեջ գիտելիքները խորացնելու նպատակով ուսանել է Փարիզի կաթոլիկական ինստիտուտում:

Հոգեշնորհ Հայր Սուրբը հեղինակ է բազմաթիվ գրքերի, որոնց թվում են «Բարեխոսություն Սրբոց», «Մեր Սուրբ Պատարագը», «Հայկական մանրանկարչությունը և Թորոս Ռոսլինը», «Աստվածամայրը» և այլ աշխատություններ:

Հանգուցյալ Հայր Սուրբի վերջին օծման և թաղման կարգը կատարվեց հունվարի 13-ին Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցում:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***